

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 1

«Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամ

հոգաբարձուների խորհրդի 04.02.2017թ. նիստի

Հոգաբարձուների խորհրդի նիստը կայացավ ք. Գյումրի, Պ. Սևակ 4 հասցեում:

Նիստին ներկա էին հոգաբարձուների խորհրդի 24 (քսանչորս) անդամից 21-ը (քսանմեկը):

Նիստին մասնակցում էին՝

- | | |
|-------------------|--|
| Ֆ. Յուլյան` | «ՇՊՀ» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահ, ՀՀ Նախագահի վերահսկողական ծառայության պետ, |
| Կ. Պետրոսյան` | «ՇՊՀ» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի քարտուղար, «ՇՊՀ» հիմնադրամի կենսաբանության, բնապահպանության և նրանց դասավանդման մեթոդիկաների ամբիոնի դոցենտ, |
| Ս. Ավետիսյան` | ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր, |
| Ա. Սահակյան` | ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր, |
| Ա. Նազարյան` | ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ, |
| Ա. Ենգոյան` | ՀՀ կառավարության աշխատակազմի ՀՀ Ազգային ժողովի հետ կապերի վարչության պետ, |
| Գ. Ղուկասյան` | ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի պետ, |
| Ս. Շիլաջյան` | «Ալֆա-Ֆարմ» ՓԲԸ-ի դեղատոների ցանցի տնօրեն, |
| Մ. Մովսիսյան` | ՀՀ ԿԳՆ «Գյումրու «Ֆոտոն» վարժարան» ՊՈԱԿ-ի տնօրեն, |
| Ե. Սերոբյան` | «ՇՊՀ» հիմնադրամի ֆիզիկայի, տեխնոլոգիայի և նրանց դասավանդման մեթոդիկաների ամբիոնի դոցենտ, |
| Ն. Հարությունյան` | «ՇՊՀ» հիմնադրամի բարձրագույն մաթեմատիկայի և մաթեմատիկայի դասավանդման մեթոդիկայի ամբիոնի դոցենտ, |
| Հ. Մելքոնյան` | «ՇՊՀ» հիմնադրամի հայոց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի դոցենտ, |
| Վ. Մանուկյան` | «ՇՊՀ» հիմնադրամի ֆիզիկայի, տեխնոլոգիայի և նրանց դասավանդման մեթոդիկաների ամբիոնի դոցենտ, |
| Է. Մաթևոսյան` | «ՇՊՀ» հիմնադրամի արտասահմանյան գրականության ամբիոնի վարիչ, |

Գ. Աղանյան՝	«ՇՊՀ» հիմնադրամի ֆիզիկական դաստիարակության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի ասիստենտ,
Ա. Մինասյան՝	«ՇՊՀ» հիմնադրամի սերվիս մասնագիտության II կուրսի ուսանող,
Մ. Գևորգյան՝	«ՇՊՀ» հիմնադրամի անգլերեն լեզու և գրականություն մասնագիտության II կուրսի ուսանող,
Մ. Հովհաննիսյան՝	«ՇՊՀ» հիմնադրամի կառավարում մասնագիտության III կուրսի ուսանող,
Ա. Սարգսյան՝	«ՇՊՀ» հիմնադրամի նախագորակոչային և ֆիզիկական պատրաստություն մասնագիտության II կուրսի ուսանող,
Ռ. Սարգսյան՝	«ՇՊՀ» հիմնադրամի իրավագիտություն մասնագիտության III կուրսի ուսանող,
Լ. Կարապետյան՝	«ՇՊՀ» հիմնադրամի կրթության կազմակերպում մասնագիտության մագիստրատուրայի I կուրսի ուսանող

ՕՐԱԿԱՐԳ

1. ՇՊՀ հոգաբարձուների խորհրդի նախագահի և քարտուղարի ընտրություն:

Հաղ.՝ ԳՊՄԻ խորհրդի
նախագահ Ֆ. Յուլակյան

2. ՇՊՀ հոգաբարձուների խորհրդի աշխատակարգի հաստատում:

Հաղ.՝ ՇՊՀ հոգաբարձուների
խորհրդի նախագահ

3. ՇՊՀ 2016թ. գործունեության մասին ամփոփ տեղեկանք-հաշվետվության ներկայացում:

Հաղ.՝ ՇՊՀ ռեկտորի ԺՊ
Ս. Մինասյան

4. ՇՊՀ 2017թ. եկամուտների և ծախսերի նախահաշվի հաստատում:

Հաղ.՝ ՇՊՀ ռեկտորի ԺՊ
Ս. Մինասյան

5. ՇՊՀ ռեկտորի ընտրության կանոնակարգի հաստատում:

Հաղ.՝ ՇՊՀ հոգաբարձուների
խորհրդի նախագահ

6. ՇՊՀ ռեկտորի թափուր պաշտոնի մրցույթի հայտարարում:

Հաղ.՝ ՇՊՀ հոգաբարձուների
խորհրդի նախագահ

Ս. Մինասյանը, բացելով հոգաբարձուների խորհրդի նիստը, շնորհավորեց ներկաներին ՀՀ Շիրակի մարզի 1-ին հոգաբարձուների խորհրդի կազմում ընդգրկված լինելու կապակցությամբ: Հաշվի առնելով այն, որ հոգաբարձուների խորհրդի նիստը վերապահվում է վարելու փորձառու ավագ անդամներից մեկին, Ս. Մինասյանն առաջարկեց Ֆ. Յուլակյանի թեկնածությունը՝ մինչև հոգաբարձուների խորհրդի նախագահի ընտրությունը:

Խորհրդի անդամները միաձայն համաձայնեցին Ս. Մինասյանի առաջարկի հետ:

Ֆ. Յուլակյանը ևս շնորհավորեց ներկաներին՝ խորհրդի անդամ ընտրվելու կապակցությամբ՝ քվեարկության դնելով նիստի օրակարգը:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝

21 անդամ. կողմ՝ 21, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

1. ԼՍԵՑԻՆ՝

ՇՊՀ հոգաբարձուների խորհրդի նախագահի և քարտուղարի ընտրություն:

Ֆ. Յուլակյանի հաղորդմամբ՝ հոգաբարձուների խորհուրդը ձևավորվելուց հետո իր կազմից պետք է ընտրի նախագահ և քարտուղար: Ըստ այդմ՝ նա առաջարկեց ընտրել քվեարկության բաց կամ փակ ձևը:

Խորհրդի անդամների կողմից միաձայն ընտրվեց քվեարկության բաց ձևը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝

ՀՀ ԱԺ պատգամավոր Ս. Ավետիսյանը՝ առաջարկելով հոգաբարձուների խորհրդի նախագահի պաշտոնում Ֆ. Յուլակյանի թեկնածությունը:

Ֆ. Յուլակյանը հետաքրքրվեց հոգաբարձուների խորհրդի նախագահի պաշտոնում այլ թեկնածությունների առկայության մասին:

Հոգաբարձուների խորհրդի անդամների կողմից այլ թեկնածություններ չառաջարկվեցին:

Ֆ. Յոլակյանն առաջարկեց «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի քարտուղար ընտրել ՇՊՀ կենսաբանության, բնապահպանության և նրանց դասավանդման մեթոդիկաների ամբիոնի դոցենտ Կ. Պետրոսյանի թեկնածությունը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Ղեկավարվելով «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 33-րդ կետով, «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի աշխատակարգի 2.4. ու 2.7. կետերով՝

1. «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահ ընտրել Ֆելիքս Խոստեղի Յոլակյանին:
2. Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի քարտուղար ընտրել Կարինե Ռահիմի Պետրոսյանին:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝

21 անդամ. կողմ՝ 21, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

2. ԼՍԵՑԻՆ՝

ՇՊՀ հոգաբարձուների խորհրդի աշխատակարգի հաստատման մասին:

Ֆ. Յոլակյանը նշեց, որ ՇՊՀ հոգաբարձուների խորհրդի աշխատակարգն առնվազն 5 օր առաջ ուղարկվել է հոգաբարձուների խորհրդի անդամների էլեկտրոնային փոստի հասցեներին: Հաշվի առնելով որևէ դիտարկում չներկայացվելու հանգամանքը՝ առաջարկեց հաստատել ՇՊՀ հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի աշխատակարգը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Ղեկավարվելով «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 41-րդ կետի 1-ին ենթակետով և «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի աշխատակարգի 2.2. կետի 1-ին ենթակետով՝ հաստատել «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի աշխատակարգը:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝

21 անդամ. կողմ՝ 21, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

3. ԼՍԵՑԻՆ՝

ՇՊՀ 2016թ. գործունեության մասին ամփոփ տեղեկանք-հաշվետվության ներկայացում:

Ս. Մինասյանը ներկայացրեց հաշվետու ժամանակահատվածում բուհի ելակետային ձեռքբերումներն ու բացթողումները: Մասնավորապես հիշարժան են մի քանի փաստեր:

Հաշվի առնելով հայ-ադրբեջանական սահմանին տիրող լարված պատերազմական վիճակը՝ բուհի ձեռքբերումներից է նախագորակոչային պատրաստության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի աշխատանքային գործունեության շարունակումն առավել բարեկարգ շենքային պայմաններում:

Միաժամանակ դեռևս մտահոգիչ է ՇՊՀ 2 ավագ դպրոցի շենքային պայմանների խնդիրը:

Բուհին «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի հավատարմագրման հանձնաժողովի կողմից տրվել է ինստիտուցիոնալ հավատարմագրում 4 տարի ժամկետով (պետական հավատարմագրման վկայական N15, 9 օգոստոսի, 2016թվական):

ՀՀ կառավարության 2016թ. սեպտեմբերի 22-ի N 1031-Ն որոշման համաձայն՝ ԳՊՄԻ ՊՈԱԿ-ը վերակազմավորվել է ՇՊՀ հիմնադրամի:

Բուհի կազմակերպաիրավական կարգավիճակի փոփոխմամբ պայմանավորված՝ հնարավոր է 2017-2018 ուստարում բակալավրի կրթական ծրագրով 8 նոր մասնագիտության («Համակարգչային գրաֆիկա», «Դիզայն», «Միջմշակութային հաղորդակցություն» /ֆրանսերեն և հայերեն, գերմաներեն և հայերեն/, «Քաղաքագիտություն», «Սոցիոլոգիա», «Հաշվապահական հաշվառում և հարկում» /ըստ ոլորտի/, «Շուկայագիտություն (մարքեթինգ)» /ըստ ոլորտի/, «Իրավագիտություն») իրականացումը:

Բուհի կազմակերպական նոր կառուցվածքը ենթադրում է ուսանողակենտրոն կառավարման նոր մոդելի կիրառում՝ հիմնված 4 հենասյունային կենտրոնների

գործունեության վրա: Այդ կենտրոններն ապահովելու են ուսումնական գործընթացի արդյունավետությունը: Մասնավորապես ուսումնագիտական խորհրդատվական կենտրոն-գրադարանի գործունեությունը կապահովի այլընտրանքային ուսուցում՝ ավանդականի գուգակցմամբ:

Չնայած 2015թ. համեմատ 2016թ. նկատելի է բուհ ընդունված ուսանողների թվաքանակի աճ՝ այնուամենայնիվ, պատկերը դեռևս գոհացուցիչ չէ:

2016-2017 ուստարում, ըստ կրթական աստիճանների և ձևի, բուհին հատկացված 1321 տեղից զբաղեցվել է 756-ը:

Հարկ է նշել, որ 2016-2017 ուստարում ընդունված ուսանողների թվաքանակի աճը պայմանավորված է քննությունների մուտքային պայմանների փոփոխմամբ, նոր մոտեցումների կիրառմամբ:

Առանձնակի մտածելու տեղիք է տալիս հաշվետու ժամանակաշրջանում բուհից հեռացված ուսանողների թիվը /244/: Ընդ որում՝ գլխավոր պատճառը ուսանողների ծանր սոցիալ-տնտեսական վիճակն է:

Ինչ վերաբերում է բուհի գիտական գործունեությանը, առաջնահերթ հիշարժան է ԳՊՄԻ ՊՈԱԿ-ի գիտական գործունեության համար ներբուհական դրամաշնորհի տրամադրման կարգի կիրարկումը: Պետք է նշել, որ ներկայացված բոլոր հայտերում ապահովվել է ուսանողների ներգրավվածությունը:

Բացի դրանից՝ բուհի աշխատողներից 2016թ. թեկնածուական ատենախոսություն է պաշտպանել 4-ը, իսկ դոցենտի գիտական կոչում է ստացել 11-ը:

Բուհ-դպրոց համագործակցային ցանցի կառուցակցման գործընթացում մեծ է առարկայական ամենամյա օլիմպիադայի կազմակերպումը, որը բուհի շուրջն է համախմբում ՀՀ տարբեր դպրոցների բարձր առաջադիմություն ունեցող աշակերտներին:

ՀՀ Շիրակի մարզի ու ՇՊՀ զարգացման հարցում մեծ է 2016թ. Նորարարությունների մրցակցային հիմնադրամի կողմից հայտարարված մրցույթին համալսարանի մասնակցությունն ու «Շիրակի պետական համալսարանի հզորացման և կրթական ծառայությունների բազմազանեցման միջոցով

տարածաշրջանային համաչափ զարգացման ապահովում» դրամաշնորհային ծրագրի իրականացման իրավունքի ձեռքբերումը:

Կարճ ժամանակահատվածում համալսարանում ստեղծվել է 6 նոր ներքին իրավական փաստաթուղթ:

Ֆ. Յոլակյանն առաջարկեց «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի 2016թ. գործունեությունը գնահատել բավարար:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Ղեկավարվելով «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 41-րդ կետի 3-րդ ենթակետով և «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի աշխատակարգի 2.2. կետի 3-րդ ենթակետով՝ «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի 2016թ. գործունեությունը գնահատել բավարար, և որոշման նախագիծն ընդունել հիմք՝ արված առաջարկություններով հանդերձ:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝

21 անդամ. կողմ՝ 21, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

4. ԼՍԵՑԻՆ՝

ՇՊՀ 2017թ. եկամուտների և ծախսերի նախահաշվի հաստատում:

Ս. Մինասյանը ներկայացրեց համալսարանի 2017թ. եկամուտների և ծախսերի նախահաշվի հիմնական կետերը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Ղեկավարվելով «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 41-րդ կետի 8-րդ ենթակետով և «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի աշխատակարգի 2.2. կետի 8-րդ ենթակետով՝ հաստատել «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի 2017թ. եկամուտների և ծախսերի նախահաշիվը:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝

21 անդամ. կողմ՝ 21, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

5. ԼՍԵՑԻՆ՝

ՇՊՀ ռեկտորի ընտրության կանոնակարգի հաստատում:

Ֆ. Յուլյանը նշեց, որ սույն փաստաթուղթը ևս առնվազն 5 օր առաջ ուղարկվել է խորհրդի անդամներին: Հաշվի առնելով որևէ դիտարկում չներկայացվելու հանգամանքը՝ առաջարկեց հաստատել ՇՊՀ հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի աշխատակարգը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Ղեկավարվելով «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 41-րդ կետի 2-րդ ենթակետով և «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի աշխատակարգի 2.2. կետի 2-րդ ենթակետով՝ հաստատել «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի ռեկտորի ընտրության կանոնակարգը:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝

21 անդամ. կողմ՝ 21, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

6. ԼՍԵՑԻՆ՝

ՇՊՀ ռեկտորի թափուր պաշտոնի մրցույթի հայտարարում:

Ֆ. Յուլյանն առաջարկեց հոգաբարձուների խորհրդի անդամներին հայտարարել ռեկտորի թափուր պաշտոնի բաց մրցույթ:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Ղեկավարվելով «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի 41-րդ կետի 2-րդ ենթակետով և «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի ռեկտորի ընտրության կանոնակարգի 2.1. և 2.2. ենթակետերով՝

1. «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի ռեկտորի պաշտոնի համար հայտարարել բաց մրցույթ:
2. Հոգաբարձուների խորհրդի քարտուղարին հանձնարարել ՇՊՀ ռեկտորի ընտրության կանոնակարգով սահմանված կարգով և ժամկետներում ապահովել մրցույթի անցկացման մասին հայտարարության հրապարակման, թեկնածուների հայտերի և անհրաժեշտ փաստաթղթերի ընդունման գործընթացը:

3. ՇՊՀ ռեկտորի ընտրությունն անկացնել 2017թ. մարտի 7-ին:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝

21 անդամ. կողմ՝ 21, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

ՇՊՀ հոգաբարձուների խորհրդի
նախագահ, ՀՀ Նախագահի
վերահսկողական ծառայության
պետ՝

Ֆ. Ցոլակյան

ՇՊՀ հոգաբարձուների խորհրդի
քարտուղար, «ՇՊՀ» հիմնադրամի
կենսաբանության,
բնապահպանության և նրանց
դասավանդման մեթոդիկաների
ամբիոնի դոցենտ՝

Կ. Պետրոսյան

ՀՀ Ազգային ժողովի
պատգամավոր՝

Ս. Ավետիսյան

ՀՀ Ազգային ժողովի
պատգամավոր՝

Ա. Սահակյան

ՀՀ Շիրակի մարզպետ՝

Հ. Միմոնյան

ՀՀ պաշտպանության նախարարի
տեղակալ՝

Ա. Նազարյան

ՀՀ կառավարության
աշխատակազմի ՀՀ Ազգային
ժողովի հետ կապերի վարչության
պետ՝

Ա. Ենգոյան

ՀՀ կրթության և գիտության
նախարարի տեղակալ՝

Մ. Մկրտչյան

ՀՀ Շիրակի մարզպետարանի
աշխատակազմի կրթության,

Գ. Ղումաշյան

մշակույթի և սպորտի
վարչության կրթության բաժնի
պետ՝

«Ալֆա-ֆարմ» ՓԲԸ-ի դեղատոների
ցանցի տնօրեն՝

Ս. Շիլաջյան

ՀՀ ԿԳՆ «Գյումրու «Ֆոտոն»
վարժարան» ՊՈԱԿ-ի տնօրեն՝

Մ. Մովսիսյան

«ՇՊՀ» հիմնադրամի ֆիզիկայի,
տեխնոլոգիայի և նրանց
դասավանդման մեթոդիկաների
ամբիոնի դոցենտ՝

Ե. Սերոբյան

«ՇՊՀ» հիմնադրամի բարձրագույն
մաթեմատիկայի և
մաթեմատիկայի դասավանդման
մեթոդիկայի ամբիոնի դոցենտ՝

Ն. Հարությունյան

«ՇՊՀ» հիմնադրամի
մանկավարժության և
սոցիալական աշխատանքի
ամբիոնի պրոֆեսոր՝

Ա. Մկոյան

«ՇՊՀ» հիմնադրամի հայոց լեզվի
և նրա դասավանդման
մեթոդիկայի ամբիոնի դոցենտ՝

Հ. Մելքոնյան

«ՇՊՀ» հիմնադրամի ֆիզիկայի,
տեխնոլոգիայի և նրանց
դասավանդման մեթոդիկաների
ամբիոնի դոցենտ՝

Վ. Մանուկյան

«ՇՊՀ» հիմնադրամի
արտասահմանյան

գրականության ամբիոնի վարիչ՝

Է. Մաթևոսյան

«ՇՊՀ» հիմնադրամի ֆիզիկական

դաստիարակության և նրա
դասավանդման մեթոդիկայի
ամբիոնի ասիստենտ՝

Գ. Աղանյան

«ՇՊՀ» հիմնադրամի սերվիս
մասնագիտության II կուրսի
ուսանող՝

Ա. Մինասյան

«ՇՊՀ» հիմնադրամի անգլերեն
լեզու և գրականություն
մասնագիտության II կուրսի
ուսանող՝

Մ. Գևորգյան

«ՇՊՀ» հիմնադրամի
կառավարում մասնագիտության
III կուրսի ուսանող՝

Մ. Հովհաննիսյան

«ՇՊՀ» հիմնադրամի
նախագորակոչային և
ֆիզիկական պատրաստություն
մասնագիտության II կուրսի
ուսանող՝

Ա. Սարգսյան

«ՇՊՀ» հիմնադրամի
իրավագիտություն
մասնագիտության III կուրսի
ուսանող՝

Ռ. Սարգսյան

«ՇՊՀ» հիմնադրամի կրթության
կազմակերպում
մասնագիտության
մագիստրատուրա I կուրսի
ուսանող՝

Լ. Կարապետյան